

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Փ օ ն № 253.

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և մէջ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ: Օտարալեզուները պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «МШАКЪ»: Խախտաւորութիւնները՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հանրապետութեան նախագահը Ռուսաստանում. Հեռագրի համարներ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենադրութիւն. Մամուլի դերը հասարակութեան մէջ. Նամակ վճարելով կազմից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Բաղդադից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ԲՈՐՈՍԱՆ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպական դրամականութիւններ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՄ

Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆրանկո Ֆորի այցելութիւնը Ռուսաստանին և թագաւոր Կայսրին՝ առաջին

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

III

Dr. Lepsius.—Armenien und Europa. Eine Anklageschrift. Բեռլին, 1896.

Մենք յիշեցինք արդէն գերմանացի յարգելի գովարտի այս երկաթորոշիկները, որ այնչափ մեծ յուզում պատճառեց Եւրոպայի հասարակական կարծիքին, և ներկայ յօդուածով կը փորձենք ծանօթացնել «Մշակ» ընթերցողներին այս կարեւոր գիրքը: Պ. Լէպսիուսի առաջարկը պարզում է մեզ թէ ինչու համար՝ այն միջոցին երբ գերմանական լրագրութիւնը այնքան թընդունալի կամ գունձ անտարբեր վարմունք էր ցոյց տալիս թիւրքացիներին, ինքն իրեն պայծառ բացատրութիւն, յանձն էր առել պաշտպանել թշուառների արդար դատը: Այնատիպի և Ասորիքի մէջ արած ճանապարհորդութեան ժամանակ, այս տարի մայիսին, ասում է հեղինակը, ես անցայ այն նահանգներից երկուսովը, որոնք նախընթաց ամիսներում հայկական անկարգութիւնների և կոտորածների ընդ ինն դարձել: Բազմաթիւ շարժումներ տեղի այս ուղիորդութեան միջոցին, այնպիսի մի երկրում, որ դեռ հանդարտութիւնը չէր տիրել, թէ քաղաքի և թէ գիւղերի թիւրք ժողովրդի հետ իմ ունեցած յարաբերութեան շնորհիւ, հետզհետէ իմ մէջ հայկական խնդրի մասին, ի հարկէ, կազմվեց մի հայեացք, որ բոլորովին հակասակն էր մինչև այն ժամանակ գերմանայում տիրող ընդհանուր կարծիքին: Այնատիպի կատարած իմ ամբողջ ճանապարհորդութեան ժամանակ ես չէ պատահեցայ ոչ մի մասնակցանի, որ վերջին 5 ամիսների զեպերի վրա իր դիտողութիւնն անհրաժեշտ պարզ կերպով չը յայտնէր իր համոզումը թէ հայ ժողովրդի ջարդն ու կոտորածները:

Դէպքն է հանրապետութեան պատմութեան մէջ: Ֆրանս-ռուսական բարեկամութեան ցոյցեր և նշաններ մենք շատ տեսանք մանաւանդ վերջին տասն տարվայ պատմութեան մէջ, ինչպէս, օրինակ, ժողովրդական ցոյցեր Պարիզի հրապարակներում, որոնք սկսվում և վերջանում էին «կեցցէ Ռուսաստան» բացականչութիւններով, և կամ ռուսաց նաւատորմի օֆիցերներին այցելութիւնները հանրապետական Ֆրանսիային, բայց, այդ բոլորի հանդէպ՝ հանրապետութեան ներկայացուցչի ճանապարհորդութիւնը դէպի Ռուսաստանի մայրաքաղաքը՝ հանդէս է գալիս իր եղակի դէպք, նշանաւոր երկու ազգերի փոխադարձ յարաբերութիւնների տարեգրութեան մէջ: Երէկ միայն Ֆելիքս Ֆոր մուտ գործեց Ռուսաստան, բայց արդէն Ռուսաստանի շատ քաղաքներում նկատվում են ողևորութեան բռնուն նշաններ, ինչպէս այդ ցոյց են տալիս հեռագրիները, և հեշտութեամբ կարելի է դուշակել, որ գերմանացի ազդեցիկները շատ էլ դո՛ւ չեն մնաց սպասելով բռնուն ցոյցերից, որոնք նահանգներ կարող են այն հիւրասիրութիւնը, որ յալիսի վերջերքին ցոյց տրվեց Վիլհելմ կայսրին...

Ողջունում ենք հանրապետական Ֆրանսիայի ներկայացուցչի այցելութիւնը Ռուսաստանին, և ցանկանում ենք, որ Ֆրանս-ռուսական բարեկամութիւնը լինի ոչ լոկալ քաղաքական բարեկամութիւն, հիմնված միմյանց դիպլոմատիական տեսակետների վրա, այլ այնպիսի համարաշխուժութիւն, որ սերտ կերպով կապվով երկու երկրները զրդի նրանց, միացած ոյժերով պաշտպանելու այն զաղափար:

սումը կարգադրած էր կառավարութեան ձեռքով և սուլթանի կամքով: Թիւրք գիւղացիք բաց և համարձակ խօսում էին այս մասին և պատմում էին: Մուլաները քարոզել են մզկիթներում, որ Շէյխ Իւլ-Խալալը հրամայել է կոտորել բոլոր հայերին... և նրանք չէին կարողանում ըմբռնել թէ այդ ինչպէս է եղել, որ դեռ զրանից յետոյ մի հայի կեսերը խնայվել է... Մեզ, ասում է գովարտ Լէպսիուս, շատ լուրջ կերպով հաղորդում էին թիւրքերը, թէ կոտորածների մի որոշ թւից յետոյ գերմանացի կայսրը գրել է սուլթանին, թէ այդքան ջարդը բաւական էր և թէ պէտք էր մի դադար տալ, որի վրա և սուլթանը հրամայել էր կոտորածը դադարեցնել:

Պ. Լէպսիուս՝ ճանապարհորդութիւնից վերադարձին, իր դիտողութիւնների արդիւնքը և քաղաքական փաստերը հայկական խնդրի զանազան կողմերի մասին, հրատարակել է մի շարք յօդուածներով Բեռլինի «Reichsbote» թերթում «Die Wahrheit über Armenien» (Ճշմարտութիւնը՝ Հայաստանի մասին) ընդհանուր վերնագրի տակ:

Գովարտ Լէպսիուսի այս գրքի մէջ՝ զիւստօր և հետաքրքրական մասը մնում է դարձնալ այդ I բաժինը: Յիշենք այստեղ նրա այդ նշանաւոր յօդուածների զանգ վերնագրերները և նրանց համառօտ բովանդակութիւնը մի քանի խօսքով:

1) Չոր թուրք. կոտորածների պատմութիւնը ժամանակագրական թուով, որի արդիւնքն է՝ օտար պաշտօնական աղբիւրն էր իմ վրա հիմնվելով՝ կոտորածի ժամանակ սպանվածների թիւը 88,243 հոգի, տեղումը քաղաքների և գիւղերի գումարը—2,500, կործանված եկեղեցիներ և վանքեր—568, բռնի մահաւորականութիւն ընդունած—559 զիւր, իրանց բոլոր բնակիչներով: Բացի զրանցից հարկւրաւոր գերդաստաններ էլ քաղաքներում: Մզկիթի վերածված եկեղեցիներ—282, աղքատացած և դուշութեան միջոցներից կատարելապէս զրկված ժողովրդի գումարը 500,000 հոգի: Գովարտը հաս-

նեքը, որոնց համար կուեղ են այդ երկու մեծ երկրների նշանաւոր գործողները և մտածողները, զրդի նրանց հաւատարիմ մնալ երկու ազգերի պատմական լաւագոյն աւանդութիւններին և պաշտպանել փոքրիկ, թոյլ բրիտանեայ ազգերի արդար բողոքը՝ արիւնտա Արեւելքում, ուր թէ Ֆրանսիան և թէ Ռուսաստանը ներկայ դարում փառաւոր յիշատակներ են թողել...

Եւ եթէ հանրապետութեան նախագահի այցելութիւնը առիթ էր այս Ֆրանս-ռուսական բարեկամութեան դուրս գալ քաղաքական շրջանից, և հիմնվել աւելի լայն և աւելի բարձր տեսակետների վրա, երկար չի անցնի, որ այդ դաշնակցութիւնը կը դառնայ քաղաքակրթական մի զորեղ զործօն, մանաւանդ արեւելեան հարցի համար, արժանանալով ազազայ սերունդների և ազազայ պատմութեան ողևորված փառաւորութեան և երախտագրեալ զգացմունքներին:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ո Ւ Ն Ե Ր (Ռուսաց գրածակարութեան)

Կ. Պօլիս, 10 օգոստոսի: Երէկ բոլոր գերմանացիները ստացան, Ֆրանսիայի և հայերէն լեզուներով, մի յիշատակագիր, որ կրում էր «Հայկական դաշնակցութեան Կ. Պօլսի կենտրոնական յեղափոխական կոմիտե» ստորագրութիւնը: Յիշատակագիրը հաղորդում է, թէ տեսնելով որ բարենորոգումների նախագիծերը անիրազարծել մնացին, և հայերի դրութիւնը, որոնք ձգտում էին միայն քաղաքացիական ազատութիւն և իրաւունքներ ստանալ, անտանելի դարձաւ, կոմիտեից ցոյց կը տայ, որ ինքն դեռ կենդանի է, և կենսաբի առաջին նշանները ազազայ գործողութիւնների սկիզբ կը դառնան: Գերմանացիներ և նրանց մօտ եղող շրջանները

ասում են, թէ այս դարձուրդի թւերը դեռ ես պակասաւոր են և կարօտ են ամբողջացնելու...

2) Փաստն է՝ ամուր ջղերի համար: Այս յօդուածում այնպիսի ահաւել իրողութիւններ և մանրամասնութիւններ են առաջ բերած, որ իրօք միայն ամուր ջղեր ունեցող ընթերցողները կարող են կարգաւ կամ լեւել... և հեղինակը գոչում է այստեղ՝ «Թէպէտ ես զըրաւանքով համակրում եմ իմ գրիչը այս ազատականութեան թանաքում թափախելիս, բայց ըզգում եմ թէ այս բանը հաբեաւոր է, որպէս զի աշխարհը իմանայ թէ ինչքն են տեղի ունեցած օրէնք և կարգ պահպանելու կաշկած մարդկանց կողմից՝ այն երկրում, որին բարենորոգումներ էին խոստացված...»

3) Կրօնական ազատութիւնը: Թիւրք-քիւլաբում գրվում հեղինակը ապացուցանում է թէ թիւրքիւնցում այնքան մեծ աղմուկով հռչակված կրօնական ազատութիւնը բնաւ զոյգութիւն չունի: Ամենին տարակոյտ չը կայ, ասում է նա, որ հայկական սարսափների սկզբնապատճառը բացարձակապէս քաղաքական էր կամ եթէ աւելի էշդէլ ուզենք, այդ կոտորածները ուղղակի վարչական միջոց էին: Բայց փաստերը հաստատում են, որ ի նկատի ունենալով մահաւորական ժողովրդի բնաւորութիւնը, որի քաղաքական կիրքերը յարուցվում և զըրգովում են միմիայն կրօնական շարժումներով, այս վարչական միջոցը պէտք էր, որ հուսկայական չափերով կրօնական հալածման ձեւն ընդունէր և այդպէս էլ եղած է: Ռուսի մի միայն այն պատճառով, որ այս կրօնական հալածումը քաղաքական շարժում չէր, մի թէ հայերը իրանց կրօնական հաւատալիքի համար հալածված ժողովուրդ են: Եթէ իրաւունք չունենանք այդ տեսլու, ուրիշն պէտք է մտածել թէ աշխարհում երբեք կրօնական հալածում չէ եղել, որովհետեւ բոլոր այնպիսի հալածումները, առանց բացառութեան, միացած են եղել քաղա-

այն միտքն են յայտնում, որ հայերը կատարելապէս փնտրեցին իրանց յանցաւոր փորձերով՝ զրկվեցան համակրութիւններից և արդեւ դարձան բէֆօրմներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

„Султанъ и державъ“—пренод. Малькольма Мак-Колля, каноника въ Египтѣ. Ս. Պետերբուրգ, 1897.

(Շարունակութիւն)

Լիւրբուրդի միտքից մի քանի օր անցած՝ բոլոր բողոքների դարմանքը ամբողջ աշխարհը, յայտարարելով թէ ինքը հրաժարվում է ազատաւիտ կուսակցութեան պարագլխի պաշտօնից: Գլխաւոր պատճառը Ղազարտօնի ձառն էր. Բողոքների համաձայն չէր, որ Անգլիան առանձին զործ տեսնէ Թիւրքիայի հետ և, տեսնելով որ կուսակցութիւնը համախառն է ամեն ծեղրունու հետ, պարտք համարեց հեռանալ իր ստանձնած պաշտօնից: Եղիշբուրգում արտասանած մի ձայնի մէջ նա պարզեց իր մտքերը և բոլորովին հակառակելից առանձին զործելու զաղափարին՝ դանդաղ դրա մէջ անգլիական շահերի համար մեծ վտանգ: Էյս պատրաստ եմ բոլոր ոյժովս կուեղ արեւելեան զործերի մէջ առանձնակի միջամտելու դէմ, այն կուսակցութիւնը, որ պահպանում է խաղաղութեան շահերը, պիտի նոյնպէս արեւելեան լինի և նոյնպէս պիտի պատրաստվի կռիւ մղելու, եթէ նա չէ ազում, որ տեղի ունենայ միջամտութեան քաղաքականութիւն: Միտքը Ղազարտօն ասում է թէ այդպէս զործելով չէ կարելի եւրոպական պատերազմի ուրուակները յարուցանել: Խախտում եմ, որ այդ պատերազմը ամենին ուրուական չէ, ես

քական շարժումների հետ. նոյն իսկ Քրիստոսի մահը ուրիշ բան չէր, եթէ ոչ քաղաքական մի դէպք, որովհետեւ քաղաքական նկատումներն էին, որ կշեռքի նման նրա դատաւարաւորութեան կողմը ծանրացրին: Այս յօդուածում առաջ են բերված զարմուրդի օրինակներ խմբվին կրօնախնդրութեան բռնադատումներից: Թէ մինչև ինչ աստիճանի յանդուրժանութիւն և ինքնապատշաճութեան էին հասել այդ միջոցին մահաւորականները, այդ երևում է նրանից, որ մի տեղ, Չիլէյում, երբ թիւրք կառավարչական պաշտօնականները հաւաքել են բոլոր տեղացի հայերին իրանց պաշտօնատանը և բռնադատել, որ կրօնախնդրութեան, — փրկութեան ամեն յոյս կորցելու համար նրանցից, պաշտօնականները համարձակ կերպով քարոզելիս են եղել թէ՛ «Գոյց այլ ես եւրոպայի բրիտանականների վրա մի վրստահիք, որովհետեւ անգլիացիք փախել են արդէն իրանց նաւատորմով, իսկ ուսանքը մահաւորականութիւն են ընդունել...»

4) Կոտորածները mise en scene-ը (գործադրութեան եղանակը), որտեղ փաստօրէն հերքում է թիւրք կառավարութեան և գերմանական մամուլի պնդումները իբրեւ թէ հայերը առիթ տուած լինեն կոտորածներին: Երբ փաշան ինքն անձամբ էր գլորում մահաւորականներին հայերի դէմ, նա բացարձակ յայտնել էր իր մօտ կանչած հայ ժողովրդի գլխաւորներին թէ «ոչ Անգլիան և ոչ էլ միւս բրիտանեայ պետութիւնները ոչ մի իրական օգնութիւն չեն կարող նրանց մատուցանել», և մի և նոյն ժամանակ յանդիմանաւոր համարձակվել էր աւելացնել. «Շնորհիւ այն պարագայի, որ մենք բարեկամ ենք ռուսների հետ, ամենին վախ չունենք ձեզ բոլորից ջնջելուց, և պիտի ջնջենք ձեզ...» Եւ այս խօսքերից յետոյ՝ թիւրք պաշտօնականները ուղղակի հրամայել էին կոտորածը սկսել... Այդպէս է եղած գրեթէ ամեն տեղ, միշտ տեղական իշխանութեան գլխաւորներն

համոզված եմ,—դատելով իմ ստացած տեղեկու-
թիւններէր, եւ խորը համոզված եմ, որ մեծ
պետութիւններէ մէջ կայացել է որոշ և վճա-
կան համաձայնութիւն՝ ոչ թող զիմադրել Անդ-
լիային, եթէ նա արեւելեան գործերէ մէջ առանձ-
նապէս միջամտելու որ և է գործ/անէ՛ս: Հաս-
խոսը յայտնում է, որ լորդ Սթրիքլի շօտառով
13-ին Պետերբուրգից ստացաւ հետադիւր, որի մէջ
տալով է թէ ոչ մի զէպըրում Ռուսաստանը
չի թող տայ և չի պաշտպանի որ և է ստիպողա-
կան գործողութիւններ հայոց հարցի առիթով:

Այսպէս, լորդ Քոքսը խրատում էր անգլիա-
ցիներին չը հետանալ եւրոպական կոնցէրսից:
Դրա այդ ձառը, պաշտպանութիւն գտնելով
պահպանողական մասնաւոր մէջ, փաշտքից լի վեր-
ադուր միտնող թողած տպաւորութիւնը Մեր
հեղինակը խիստ յարձակում է այդ ձառի վրա:
Նա առաջ է բերում Քոքսի նախկին ձառերը:
Եւ իրաւ, որքան հակասութիւն: Ութ մարի զը-
րանից առաջ լորդ Քոքսը խոսում էր Ռեթ-
ստաններէ կլորում նոյն արեւելեան հարցի մա-
սին: Քննադատելով լորդ Սթրիքլի քաղաքա-
կանութիւնը, նա այն ժամանակ ասում էր հե-
տեալով. «Ի՞նչ վախճանին հասանք: Բ. Գուրը
յաղթող ճանդիսացաւ ըզոր կէտերի մէջ: Այս-
պէս է տեսնու և սոսկալի հերակացութիւնը:
Վերջին ժամանակ հայերի գրութիւնը անհամե-
մատ վատ է առաջիկա գրութիւնից: Եւրոպայի
կատարեալ համաձայնութիւն կայ, մեզ հաւա-
տացում են, որ նա համակրում է, բայց ահա
ինչ վախճանական վճիռ է ստանում այդ հարցը:
Գիտեմատական յարաբերութիւնների պատ-
մութեան մէջ եւս դրանից աւելի սարսափելի մի
վճիռ չը գիտեմատ: Այդ վճիռը կամս Գուրսով-
սկու խոսքերն են, որ մենք բերել ենք ամբող-
ջապէս, այն անողորմ խոսքերը թէ Եւրոպան ու-
չինչ չէ կարող անել հայերի կոտորածի առաջն
ստանելու համար: Բերելով այդ խոսքերը, Քոք-
սի ասում էր. «Այս ֆրազը լի է լուրջ և
սարսափելի նշանակութեամբ: Նա մի բացարձակ
յայտարարութիւն է թէ Եւրոպան չէ կամենում
այստահանու Օսմանիկի Օսմանիկի պետութեան
գործերի մէջ: Ահա թէ ինչին հասանք մենք մօտ
ստանինք: Դար քրիստոնէութիւնից յետոյ, մի
ժամանակամիջոց, որի ընթացքում Եւրոպան իր
պատրաստ զօրաբանակը հաշուում է ոչ թէ հա-
զարներով, ոչ թէ տասնեակ հազարներով և

այդ՝ մի ժողովրդի դիմաց, որ քսան միլիոնից
աւել չէ: Այնպէս որ, երբի չափազանցութիւն
չի լինի, եթէ մենք ասենք թէ Եւրոպան, որ
ամեն տեղ երկրպագում է մի և նոյն Քրիստո-
սին և դաւանում է մի և նոյն Աւետա-
րանը, այսպէս թէ այնպէս մտադիր է քսան-
երորդ դարի չէմբում թողնել իր տանջ-
վող եղբայրներին բարբարոս բրդերի անգործ
կամայականութեան տակ, բրդերի, որոնց զե-
կավարում է կամ որոնց խրատում է և ա-
ւելի ևս բարբարոս կառավարութիւնը: Այսպէս
է եղբայրացութիւնը—տխուր և սոսկալի վախ-
ճան: Եւ չեմ ուզում որոնել որ և է յանդիմա-
նութիւն առաջ բերել, եւս այս ժողովից չեմ
խնդրում այս կամ այն վճիռը արտասանել որ-
պէս կուսակցութեան ժողով: Բայց եւս թախան-
ձաղին խնդրում եմ ներսից եղբայրներին ուշա-
գրութիւն գործնել այս հարցի վրա, լուրթեան
չը տալ նրան, ինչպէս անում են մեղանից չա-
տերը,—որովհետեւ այդ լուրթիւնը ամենածանր
և ամենաամբոթակին է քաղաքակրթութեան պատ-
մութեան մէջ,—այլ յիշել, ինչպէս որ լինի, որ
եթէ նրանք կամենան զիմել Մեծ Բրիտանիայի
ժողովրդին, եւս համոզված եմ, որ ոչ մի հարց
այս երկրի հոգու, խելի և խոճմտանքի մէջ
այնպիսի համակրութիւն չէ յարուցանում, ինչ-
պէս հայոց հարցը:

Եւ ահա այդպիսի գեղեցիկ խոսքերից յետոյ
լորդ Քոքսը իմ թախանձաղի անցում է
պաշտպանել կօմս Գուրսովսկու սկզբունքը,
քաղաքակրթ չը հետանալ եւրոպական կոնցեր-
սից: Նա առաջ կը դրուի. «Եւս չեմ ասում,
թէ հրաժարում եմ սուր հանել մեծ և անդե-
տաճգիլի գործի համար: Եւ ինքս, երբ միմիտ
էի, քիչ էր մնում պատերազմ սկսելու: Եւ չեմ
կարծում, որ քրիստոնէական միմիտը, ով էլ
լինի նա, նկատի առնելով իր խնամքն յանձն-
ված կարևոր չափերը, կարողանար խուսափել
պատերազմի վտանգից: Բայց եւս ասում եմ, որ
քրիստոնէական միմիտը, որ խրոմ է Եւրո-
պական պատերազմի մէջ, չը հարկադրված ծա-
րահել ծանր անհրաժեշտութիւնից, այնպիսի
հանգամանքներ, որոնք անմիջապէս և բացա-
րայ կերպով քրիստոնէական բնաւորութիւն ու-
նեն, ոճիւր է գործում իր երկրի և իր ստանձ-
նած պաշտօնի վերաբերմամբ:

(Կը չարունակվի)

են եղել ջարդի կազմակերպող և առաջնոր-
դող:

5) Թրքական և զօրքան և յօդուածի
մէջ բերված են այն հրէշաւոր սուտերը, որ
թիւրք կառավարութիւնը ստորածում էր ամեն
մի կոտորածից յետոյ և աշխատում էր մի կող-
մից ջարդված հայերի թիւը մինչև minimum-ը
պակասեցնել և միւս կողմից թիւբերի կորուս-
տը մինչև maximum բարձրացնել: Այդպէս մի
սու մի պատմված է նաև թէ ինչ սոսկալի բըռ-
նութեան տակ են կորզվել կենդանի մնացած
ժողովրդից այն չնորհալուութեան ուղեբնները,
որոնք կոտորածներից անմիջապէս յետոյ սկսան
թափել Պոլսի առ ոտս գահիցի բարեկենսա
ինքնակալին...

6) Ո՞վ է յանցաւորը: Այն պաշտօնական
հրամաններից, որոնք առաջ են բերված այդ յօ-
դուածում, յիշենք միայն հետեւեալ երկուսը: Գիւ-
րինի կազմակերպող հեղադրել էր Սթրիքլի վա-
րիւն—«Կարող ենք վտանգանել ձեզ, որ ոչ մի
հայ ողջ չենք թողնի: Գիւրինում»: Իսկ Արաբ-
կիւրում պահելով է հետեւեալ յայտարարութիւ-
նը. «Վարդապէի որդիք, կատարեցէք ձեր պարտ-
քը. մի խնայեք ոչ մի հայի. այս է պալատի
հրամանը. նրանք, որ անհնազանդ չը գտնվեն
այս հրամանին, պիտի նկատվեն իրեն հայ և
սպանվեն: Մահադատներն իրանց եռանդը և
զէպի կառավարութիւնն ունեցած հաւատարմու-
թիւնը ցոյց տալու համար պարտաւոր են նախ
իրանց բարեկամ և հայ երկրի սպանելու:
Պարզ է, կարծենք:

7) Պետութիւններէ պատասխանա-
տուութիւնը յօդուածի մէջ հեղինակը մի
սու մի յիշում է այն բոլոր զանազանութիւնները
և այլ պաշտօնական կապակցութիւնները, որով
մեծ պետութիւններն ընդհանրապէս և նրանցից
ամենք մասնաւորապէս յանձն են առել պաշտ-
պանել թիւբերի քրիստոնէայ աղբարեակու-
թիւնը և գտնում է, որ նրանց այդ պաշտպա-

նութիւնը միմիայն խաչատարակութիւն է բերել
իրանց զինի և կորուստ հայերին *):

Ահա այս դադաւարով է, որ շերք, ասում
է զօկու, Լէպիտու, 17 տարի սպանուց յե-
տոյ, եւրոպական զինանախարարութիւնը յիշեց
իր համակրութիւնը զէպի թրքական բարբարո-
սութեան զոհերը Հայաստանում և անցեալ տա-
րի (1895) իր փաստաբաններին ուղարկեց սու-
թիւնի մօտ, որպէս զի մարդկային էականերին
արժանի գոյութեան իրաւունք ձեռք բերեն նրա
քրիստոնէայ հպատակների համար, թիւքը տան-
ալը: Նախան ձից կատաղեց և այն ժա-
մանակ երբ իր անհաճոյ այցելուներին զանազան
խտառումներով էր կերակրել, ինքն միւս կող-
մից իր բարբարոսական իրաւունքը գործ դնելով
իր գերու վրա սոսկալի եղանակով խեղդեց Եւ-
րոպայի համակրութեան այդ թշուառ զոհին:
Գիւրսովները սպասում էին զօկու թէ՛ չնորհի-
լիւնից զինանախարարական քաղաքի, չուտով պիտի
կարողանան ազատ Հայաստանի ձեռքը սեղմել,
երբ յանկարծ զուրը բացվում է և նրանց պաշտ-
պանել ուղած կնոջ զիմել գցվում է նրանց ա-
ռաք: «Գիւրսովները չիմովում են և միմիայն
մից չուտ են տալիս երեսները իրեն թէ ոչինչ
չեն տեսել և չարունակում են նրանից յետոյ
դարձեալ առաջվայ նման սեղանակցել տուլթա-
նի հետ...»

8) Հեղապական դիմակ յօդուածի մէջ հե-
ղինակը ցոյց է տալիս այն կեղծ ու պատիւ վար-
մունքը, որ ունեցած են թրքական պաշտօնա-
ները կոտորածներից վերջը և նկարագրում է
թրքական հանրածանոթ բանտերը:

*) Թէ թրքը կառավարութիւնը ինչ ազդեց է մակ
տալիս Եւրոպական պետութիւնները միջամտութեան,
այդ մասին հեղինակը պատմում է մե ընտրող զէպը:
Վարեն բարբարոս, եւրոպական հեղապատները վա-
րեն զանազան վէճեր և անհրաւելութեան առիթով և
վալեն իրաւաստեալ պատասխանել է նրանց. «Թրքը
կառավարութիւնը և Հայ ժողովրդին այնպէս են մի-
միայն ձեռք ինչպէս այլ և է կենք եւր այդ
պատմում է իր կնոջ, տալենքը պէտք չէ խառնել
նրանց զոհում»:

ՄԱՍՈՒԼԻ ԳԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱՌԹԵԱՆ ՄԷՋ
(Նամակ Գաւառից)

30—40 տարի առաջ մեղանում գոյութիւն
ունէր աղայական տիրապետութիւնը և ձե-
րանիների վճիռը որոշ հարցերի մասին, որ մէկ
կամ միւս տեղ երևան էին գալիս: Գիւրսով կամ
քաղաքում մէկը միմիայն անպատում կամ վի-
րաւորում էր, աղայական արևելքը իրանց վը-
ճիւն էին գտնում, սուգանքի էին ենթարկում:
Եւս յանդուրին: Երկրեցեցան, զարգացան, կամ
աղգային մի հարց կար ընկնել, այդ ձեռք ի-
նքն էին, որ վճիռ էին կայացնում: Համեմատ
իրանց բարեհայեցողութեան, նրանք երբէք չէին
կարող տանել, եթէ մի երիտասարդ համարձակ-
վէր կարծիք յայտնել կամ խօսքի, դատողութեան
մէջ մտնել. չէր խելքի բանը չէ՛ս կտէին նրան:

Այսպէս էր ժամանակը, այսպէս էին մարդիկ.
Բայց այն օրից, երբ կրթութիւնը հետզհետեւ
ընդհանրացաւ, հրապարակ եկաւ և մամուլը, այդ
օրերից սկսած գտնուել, քննելու կարգն էլ
փոխվեց: Որ և է հասարակական հարց չէ
ստանալալովում այն տեղով, որին վերաբե-
րում է, այլ գտնում է ընդհանրաբար սեփական-
նութիւն և այդ հարցի մասին դատում վճում
են ոչ միայն տեղական ձեռքները, այլ և ա-
մեն տեղի, ամեն դատակարարի ու հասակի մար-
դիկ: Նայելով հարցի ծանրութեան մասնաւոր մի-
ջոցով յայտնվում են շատ կամ քիչ անհանձնի
կարծիքներ, որ նոյնպէս ժողովրդի, մասնաւոր
ընտելեան Դիմ է գտնում, իսկ հասարակու-
թիւնը իր որոշ համոզմունքն է կազմում որոշ
հարցի մասին—որը մենք անուանում ենք հա-
տարակալական կարծիք: Ուրեմն մամուլը
ներկայումս է որպէս հարցի արժարձող և
հասարակական կարծիքին նիւթ մատակարարող:
Շատ խղիւղներ, շատ գործեր, որ մի ժամ-
նակ չարիքներ էին պատճառում որոշ տեղում
և ծածուկ էին մնում հասարակութիւնից, այսօր
հրապարակի վրա են գրվում և դատաւիտում:
Հարգաւորները (հասարակական գործունէութեան
մտքով ասած) արժանանում են հասարակութեան
արհամարհանքին: Ընդհանրապէս, լուս գործերը
նոյն ձանաղարկով օգնելով ընդունելութիւն են
գտնում: Հետեւաբար մամուլը ամենապարզա-
րար պարզէն է ինչպէս դատաւիտելու և գովելու
հասարակական լուս կամ վատ արարքները, նոյն-

պէս և անհատներին իրեն հասարակական գործի-
չի հարուածելու և դրուատելու: Սա մամուլի
պարտականութիւնն է:

Բայց թիչ չեն այնպիսի զէպեր, որ դատա-
նելում հասած թղթակցները կամաւ ուղում
են մէկից վրէժ առնելու համար անուանակիւ
իրանց չը սիրած մարդուն: Գրա համար էլ աղ-
նիւ մամուլը սիրալոյսով բաց է անում իր էջերը
հակառակ կողմի, անուանակիւ թառաչ և
կրկնակին գրելու առաւելութիւն է տալիս: Այս
բոլորը զիտեհալով հանդերձ թիչ չեն և այնպիսի
մարդիկ, որոնք խուսափում են վճիռ բռնել
հասարակական օրգանում, վախենալով իրանց
շատ սիրալոյսով թղթակցներ լացվելուց՝ դիմում
են դատարանի օգնութեան, որպէս զի այդ ձա-
նաղարկով իրանց արա տաւ օրված պատի-
ւը վերականգնեն (1):

Մարդուս կեանքի այն մասը, որ պատկանում
է հասարակութեան, սրա ընդառաջութեան նիւթ
էլ պիտի գտնուի, ոչ ոք իրաւունք չունի տըր-
անջալու, որ իրան լուս գոյնով չեն նկարա-
գրում: Նկարագրութեան մէջ սխալ կամ անար-
դարութիւն է գտնում, կարող է հերքել, ճշմար-
տութիւն է տեսնում, պարտական է օգտվել և
իր պակասութիւններն ուղղել և իր կողմից նը-
պատել մամուլը: Նշանակութեան բարձրանա-
լուն: Ուրիշ բան է, եթէ մի ըմբիւր, հողերա-
կանի կամ փաստաբանի ընտանեկան կենդը
են նկարագրում, նրա անձնական գործն են
հրապարակ հանում, որ ամենին կապ չունի
հասարակութեան հետ, այն ժամանակ նախ՝
աղնիւ մամուլը իր էջերում տեղ չի տայ այդ-
պիսի պատկերի գրվածներին, և երկրորդ՝
եթէ տեղ էլ տուել է, անպատճառ իրաւունք
ունի զիմելու այն դատաստանին, որը իսկա-
պէս անձնականի պաշտպանութեան համար էլ
հաստատված է:

Վերջացնելով մեր խօսքը՝ կրկնում ենք՝ նը-
րանք, որոնք հասարակական բնաւորութիւն ունե-
ցող գործունէութեան մասին գրվածների զէմ
փախանակ հրապարակական հերքման դիմում են
դատարան, նրանք, նշանակում է, չեն կարողա-
նում ջոկել մասնաւոր ընդհանրից, կամ վա-
խենալով աւելի խոր լարվելուց՝ ուղում են մի
կերպ խուսափել իրանց համար անախորժ և
անպատճառ կուրից:

X.

9) Սով յօդուածով, ակնառաւ և անկողմա-
պաճ վկանների ցուցմունքի հիման վրա, հեղինա-
կը նկարագրում է այն սոսկալի թշուառութիւնը
և առնելի կարտոտութիւնը, որին ենթարկված
էին և են 546,000 հայ ժողովուրդ, Փոքր-Ասիայի
11 նահանգներում: Աղեկաւոր տեսարաններ են
նկարագրված այդտեղ, որոնք նոյն իսկ ջարդի
արհաւիրքից պակաս սոսկում չեն պատճառում
ընթերցողին: Խաբարներից գրված մի ընդարձակ
տեղեկագրի մէջ կարդում ենք, թէ՛ Տէրջան գա-
ւառի 32 գիւղերում և ոչ իսկ մի աղջիկ կարելի
է գտնել ութ տարեկանից վեր, որ ամուսնացած չը
լինի, թրքերից և բրդերից առնանդելու երկիւ-
ղից... և վերջապէս:

10) Հաւանական հետեւանք յօդուա-
ծում ապացուցանում է, թէ կոտորածների և ա-
ւերումների անմիջական արդիւնքն է եղած
«Փոքր-Ասիայի ամբողջ արեւմտեան
մասի և Միջագետքի հիւսիսային կող-
մի երկրագործութեան կատարելապէս
չնչացումը, որի գառն հետեւեալ զէպի է
ոչ միայն հայերի, այլ և թիւրքերի համար: Սրանից
յետոյ բնակատեղաւոր բուրգերը պիտի ջանան, որ
Հայաստանում երբեք խաղաղութիւն չը տիւրէ
մահաբնական ժողովրդի ֆանատիկոսութիւնն էլ
զաղար պիտի չունենայ, որովհետեւ այդպէս է
հասկանում թիւքը կառավարութիւնն իր չափը:

I. Այս 10 գլուխներից վերջ գոյիս են գրքի
միւս բաժինները:

II. Եկաւ որոշածն էր, ուր պատմված են գա-
նազան տեղերի ջարդերի մանրամասնութիւննե-
րը, որ արդէն ծանօթ են:

III. Հայաստանի վիճակը կոտորած-
ներից առաջ, որ մի համառօտութիւն է
էմիլ Գիւլունի ընդարձակ յօդուածի, թարգմանված
և արտատպված Contemporary Review ամսա-
գրից (օգոստոսի համար 1895, «The Condition
of Armenia before the massacres.»)

IV. «Ոճիւրն երից ուցաց կ», որակը առաջ

են բերված եկեղեցիների պղծումներ, քահա-
նաների սպանութիւնների, բռնի մահաբնական-
նացումների և կանանց բռնաբարութիւնների առանձ-
նական սոսկալի զէպեր, ակնառաւներէր պատմ-
ված:

V. Կ. Պոլսի վեց դեպատներին կազմած տե-
ղեկագիրը 1895-ի ջարդերի մասին: Այս տեղե-
կագիրն արդէն յայտնի է ընթերցողներին: Նա
հրատարակված է հայր Դարմաւանից առանձին
գրքով՝ «Martyrologe armenien» վերնագրով և
կայ նաև անգլիերէն «Blue Book»-ի մէջ, և
վերջապէս:

VI. Բաժինը կազմում է վիճակագրական
տեսութիւն թէ՛ Փոքր-Ասիայի 11 վիլայե-
թում և թէ՛ Կ. Պոլսում (1896 օգոստ), ամեն մի
քաղաքում և գիւղում տեղի ունեցած ջարդերի,
կոդուպտների, բռնաբարութիւնների, մահաբնական-
նացումների վրա և ցոյց է արված թէ՛ որ վի-
լայեթում քանի տասնեակ հազար կատարելապէս
հայ կարտ մնացած քրիստոնէաներ են մնացած:
Այդ հաշիւից երևում է, որ Հայաստանում այժմ
այսինքն կոտորածներից և բռնի մահաբնական-
նացումներից յետոյ, մնացել են մօտաւորապէս
700,000 հայ, որոնցից, ինչպէս արդէն յիշեցինք,
546,000-ը դառն աղքատութեան են մատնված:

Յարգելի զօկուրի այս նշանաւոր աշխատու-
թիւնը գրված է կենդանի ոճով և նրա ամեն մի
խօսքի մէջ նկատվում է խորին կարեկցութեան
զգացմունք և իր պատմածի ու քաղաքածի բացար-
ձակ ճշմարտութեան մասին անկեղծ համոզում:

«Armenien und Europa» այս տարի լոյս տե-
սաւ նաև անգլիական թարգմանութեամբ և հրա-
տարակիւ, ու՛ չարքար, մի խառնաբաշտ առա-
ջաբանի մէջ հաղարարու հայ մարտիրոս-
ներ չարարանքը և մահը յիշելով, խորապէս
զգացված որով զանգատում է քրիստոնէայ
եկեղեցիների ցոյց տուած անարարութեան
վրա...

Արարիւն

ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԻԿԱՅԻՅԻ

Օգոստոսի 8-ին

Օգոստոսի 6-ին, երեկոյեան ժամը 11-ին, քաղաքային թատրոնի մօտ, գաղտնի հարուածներով սպանվեց 24 տարեկան մի պարսիկ։ Սպանողները նոյնպէս պարսիկներ են։ Ոճրագործութեան պատճառը այն է, որ այդ երիտասարդը անցել ամիս 20-ին, միտումով օսերի ուղղափառ եկեղեցու, ընդունել էր քրիստոնէութիւն։ Հանդուգնաբար պարսիկները կոչում էին Հաչին։ Նա խոչնդէր էր, վաղիկավաղում պարսկերէն էր կոչակարութեամբ։ Նախ քան մերկրովը երիտասարդը մի քանի շաբաթ շարունակ գնում է եղել օսերի բանաստեղծ մօտ, որը ծանօթացրել է նրան ուրիշ գրքի հետ և սովորեցրել է մի քանի զինուոր աղօթքներ։ Միտումով թեան նախընթաց օրերը այդ պարսիկը ընկնում է ծանր գրանամակեան դրոշմեան մէջ։ Մի կողմից սրտի ցանկութիւնը—մանկ քրիստոնէական եկեղեցու գիրքը, միւս կողմից—սարսափը անխուսափելի մահի առաջ, որովհետեւ պարսիկները, իմանալով հանդուգնաբար մտադրութիւնը, սպանութեան սատակ սպասալիներ են տուել։ Վերջապէս, զորված ինչ որ անձանց կողմից, նա ընդունում է քրիստոնէութիւն, մկրտութեան խորհուրդը կատարվում է հանդիսաւոր կերպով։

Քրիստոնէացի դաւանութիւն ընդունելուց յետոյ նա վախճանում է ազատ ման գալ։ Այդ էր պատճառը, որ ոստիկանապետից խնդրել էր զէնք կրելու թույլտւութիւն։ Սպանութեան ժամին թէև զէնք ունէր մօտը, բայց ոչ մի կերպ չէ կարողացել պաշտպանվել, որովհետեւ սպանողները խորհուրդով նրան հարեցրել են և թատրոնի անկիւնը յարմար գտնելով՝ կատարել են չարագործութիւնը։ Այսօր կատարեցին նրա թաղումը։ Թաղման ժամանակ չէր կար ոչ մի պարսիկ։ Իսկ ճանապարհին պատահող պարսիկներին, որոնք զինարկներ չէին վերցնում և կամ ծիծաղում էին, ոստիկանութիւնը բռնել էր տալիս։ Բռնված են մօտ 15 պարսիկ։ Գրողնա քաղաքում կալանաւորել են մի քանի կառկածուր պարսիկներ։

Յ. Խաչատրեանց

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 9-ին

Խոնարհաբար խնդրում եմ, Մանամոզովի յանձնարարութեամբ, «Մշակի» մէջ տպագրել հետեւեալը։

Թիֆլիս այնչեղ օտար հիւրերին ընդունելու համար կազմված տեղական Մանամոզովի զինուոր է Թիֆլիսի ընդհանրական խնդրելով, որ եթէ հնարաւոր է, ընդունեն իրանց բնակարաններում, օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 1-ը, մի կամ մի քանի օտար հիւրեր։ Գնալագողներին խնդրվում է այդ մասին տեղեկացնել Մանամոզովի նախագահ բժշկապետ Ելզենից Պաւլովիչ Գառնդիլինին (Բալայա Վ. Օղովիչ-նայա, տուն Օղերովի, նախկին Մատինովի)։

Բացի դրանից, տեղական Մանամոզովի խոնարհաբար խնդրում է այն անձանց, որոնք գիտեն օտար լեզուներ և ուսանողներին, որոնք կը կամենան աշակցել Մանամոզովի, յայտարարել այդ մասին ու նախագահին։

Մանամոզովի անդամ

Բժ. Յ. Լօրիս-Մէլիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Միջ հաղորդում են, որ զանազան նպատակաւոր յանձնաժողովը այս օրերս ուղարկեց հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին մի նոր գումար, 1542 ռուբլի, Թիւրքիայից վախճան հայ գաղթականների օգտին, յայտնելով որ այդ վերջին գումարն է։ Ուրեմն Գառնիս յօգուտ հայ գաղթականների ուղարկել է ընդամենը 18.000 ռուբլի։

Օգոստոսի 8-ին, կարճ, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց մեր հասարակութեան յայտնի հայ գեներալ՝ Ստեփան Խոսիպովիչ Քիչմիշի։ Չնայած վայր ընկնելու պատճառով, բժիշկները ստիպված էին նրան լարջ օպերացիայի ենթարկել, որը և առաջ բերեց ծերունի գեներալի մահը։ Հանգուցեալը ծնվել էր 1833 թ.ին։

Թիֆլիսում ուսում առնելուց յետոյ՝ նա մտաւ Մոսկովայի համալսարանի իրաւաբանական բաժինը, որտեղ և աւարտեց։ Ասկան նա իրաւագիտական ասպարիզում չը մը նայց, և Նիկոլայեւիկի ակադեմիայում մասնագիտական զինուորական ուսում առնելուց յետոյ՝ մտաւ զինուորական ծառայութիւն, ուր և մնաց մինչև մահը։ Վերջին ուսումնական պատերազմի մէջ հանգուցեալ Քիչմիշի աչքի ընկնող գեր կատարեց Արդանանի և Կարսի կռիւններում։ Իր պաշտօնական պարագլուխներին ազատ ժամերը գեներալ Քիչմիշիով՝ նուիրում էր գրական աշխատութիւններին։ 80-ական թեականներին նա հրատարակեց «Война въ турецкой Армении въ 1877—78 г.» հետաքրքրական գիրքը, իսկ նորերս պատրաստվում էր հրատարակել մի նոր աշխատութիւն՝ «Мемуары сфигера генералнаго штаба», որը, ինչպէս լսեցինք, արժանացել է զինուորական շրջանների հաւանութեան, բայց նա մեռաւ, առանց կարողանալու այդ պատրաստ աշխատութիւնը լոյս ընծայելու։ Քիչմիշիով մեռաւ 64 տարեկան հասակում, գեներալ լեյտենանտի աստիճանում։ Նա անդաւն է։ Թողել է արդեօք նա որ և է կըրտակ իմ ոչ, մենք չը գիտենք։ Նրա ժառանգ են հանդիսանում իր եղբայրները, որոնցից մէկն է տեղական լեզուներին աւազ-ցէնդօր Ալեքսանդր Քիչմիշեան, որ յայտնի է մեր հասարակութեան իր «Օրերից Բերդիանց» գրութեամբ։ Հանգուցեալ գեներալը ոչէր է թաղվի այսօր, երեք շաբաթի օր, Վանքի բազում։

Լսում ենք, որ Բաղում հայոց թատրոնական խումբ պահելու համար կազմված Մանամոզովի արդէն ներկայացուցիչ է ուղարկել Կ. Պոլիս, այնտեղից գերատնայներ և զերատնայներ հրաւիրելու համար։

Կովկասեան կառավարչապետի զինամասն հրատարակած պաշտօնական հաւելց (որ տպված է «Кавказ») լրագրի օգոստոսի 10-ի համարում, երևում է, որ յօդուտ թիւրքաւոր գաղթականներին մինչև օգոստոսի 1-ը հաւաքված գումարից չը ծախված մնում է 37.097 ռ. 57 կոպէկ։ Իր այդ հաշիւը զինամասնը վերջացնում է հետեւեալ նկատողութեամբ. «Գաղթականներին օգնելու պահանջը ամառվայ միջոցին պակասեց, ըստ երևոյթի այն պատճառով, որ ամառը մեծ հնարաւորութիւն էր այդ աշխատանքը գտնելու։ Միջ թեւում է, որ այդ ենթադրութիւնը այնքան էլ հիմնաւոր չէ, ըստմանիւ գաղթականներն ամենանկողմնակի մէջ են, բայց այնուամենայնիւ օգնութիւն չեն ստանում, զուցէ այն պատճառով, որ ոստիկանութիւնը նրանց մասին տեղեկութիւն չունի։ Չենք հերքում, որ գաղթականների մի մասը աշխատանք և գործ է գտել, բայց միւս մասն էլ զուրկ է մնում օգնութիւնից, աղմկիտրուայից ծանօթ չը լինելու պատճառով։

Յայտնի գիտնական Բորէրտ Կօլս յայտնեց, որ ինքը չէ կարող մասնակցել Մոսկովայի բժշկական համաժողովին, պատճառ բերելով իր որդու հիւանդութիւնը։ Հաղորդելով այդ լուրը, մայրաքաղաքի լրագրիները աւելացնում են հետեւեալ տարբերակ նորութիւնը. «Կրա հետ միասին Կօլս խնդրեց, որ իրան յետ ուղարկվի իր անդամակցական 10 ռուբլի վճարը»։

Միջ հաղորդում են, որ Շեքսպիրի գրութեան իր հայ թարգմանիչ Յովհաննէս Խան Մառնիսան պատրաստում է հանձնարել անգլիացի գրողի մնացած գրութեան թարգմանութիւնը, որը լոյս պէտք է ընծայի Հրատարակչական ընկերութիւնը։

Խնդրում ենք «Մշակի» այն բաժանորդներին, որոնք վրա ապառնիկներ կան, չտապեն հասցնել խմբագրութեան իրանց բաժանորդագները։

Օգոստոսի 10-ին, զիւրկովայ 2 ժամին, Բաբոնապա փողոցի վրա, «Մեքենայի րեալ» կազմած չինութեան մէջ, որ պատկանում է իշխան Մուրադովին՝ հրդեհ պատահեց։ Կրակը սկսվեց կահկարասիքի մի արհեստանոցից, և մինչև հրդեհաչէնքի խորի գալը անցաւ հարևան Գառնիսեանների և Սալիւովի խանութները։ Հրդեհաչէնքի խումբը կարողացաւ, թէև մեծ

զմուարութեամբ, կանգնեցնել հրդեհը, որը սպառնում էր ոչնչացնել կահկարասիքների խանութների աւազը չարքը։ Էլի նորից երևան եկաւ մեր հրդեհաչէնք խմբի բոլոր պատասխանները. կամ ջուր չունեն, կամ զինուորային թիւն է պակաս, կամ խողովաներն են փչացած։ Դատ անգամ են մեր գաւառական քաղաքները գանգաւորում, որ հրդեհաչէնքի թուլութեան պատճառով մեծ վնասներ են առաջանում։ Ինչ կարող են անել գաւառական փոքրիկ քաղաքները, քանի թիֆլիսն անգամ նոյն ցաւով է բռնված։

ԿԱՎՋՈՒԱՆԻՅԻ մեզ գրում են. «Ջանադան յարգելի պատճառներից ստիպված, Մարտիան վարդապետը, երէկ, օգոստոսի 3-ին, ընկված համարելով նախորդ երէցիտական ժողովը (որի մասին հաղորդված է «Մշակի» № 91-ի մէջ) հրաւիրեց նոր ժողով։ Թեկնածուներ այս անգամ առաջարկվեցին Յ. Շահինեան, Մ. Վաղարշան, Գ. Ասոյան, Մ. Բիւրաբեան, Բ. Անմեղիկեան, Ա. Մատաշեան և ի. Բիւրաբեան, որոնցից Յ. Շահինեան 65 ձայնով ընդգրկւ է 59-ի ընտրվեց երէցիտական խոչ հաշուառնները ընտրվեցին Վ. Տ. Վարդանեան, Ա. Ռոստոմեան, ի. Բիւրաբեան և Գ. Ասոյան»։

ՏԱԳԱՆՐՈՐԴԻՅԻ մեզ գրում են. «Օգոստոսի 4-ին հանրային ջրերից Կրիմ գնալու ժամանակ Բոստօլի և Տագանրօզի միջև վախճանվեց Մոսկովայի համալսարանի բժշկական բաժնի ուսանող Սիւրիկեանը 19 տարեկան հասակում, թոքախտից։ Մարմինը փոխադրվեց Մոսկովա»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Պարսկական սահմանից ստացված տեղեկութիւնները՝ հայերի և քրդերի մէջ տեղի ունեցած ընդհարումների մասին՝ չառ կէտերում համաձայն չեն թիւրքաց աղբիւրներից ստացված տեղեկութիւններին հետ։ Այժմ յայտնվում է, որ թիւրքաց Հայաստանում վանի նահանգի աղբիւրները թիւրքերը ապստամբվեց քրդերի դէմ և հայերը ապստամբ են գտնում պարսկական հողի վրա։

«Daily News» լրագիրը Թարիդից տեղեկութիւն ստացաւ, որ սահմանի վրա նորերս արիւնհեղ ընդհարում տեղի ունեցաւ պարսից զորքերի և քրդերի մէջ։ Վերջինների կողմից սպանվեցին և վիրաւորվեցին 60 մարդիկ և յետ փախան զէպի թիւրքաց հողը։

Աղբալում (Վանի գաւառ) ապստամբված հայերը, ուղեկցութեամբ բանաստեղծների և բժիշկների, մի քանի ընդհարումներ ունեցան քրդերի հետ։ Երկու կողմերն ևս նշանաւոր կորուստներ կրեցին։ Հայերը յետ քաշվեցին զէպի պարսկական սահմանը և պատրաստվում են նոր յարձակումներ գործելու։

Կ. Պոլսում, «Voss, Zeit.» լրագրի խօսքով, հայկական ապստամբութեան զորոյներն անգլիացիներին են համարում, այն ինչ անգլիական մամուլը ենթադրութիւն է յայտնում, երբ Գառնիսը ներկայումս չարաւանակում է իր բնաջինջ աւազը պատերազմը հայերի դէմ և որ քրդերը սուլթանի կամը կատարողներն են միայն։ Երկու ենթադրութիւններից որը աւելի ճշմարիտ է Պէտք է ենթադրել, որ զբանցից իւրաքանչիւրը պարունակում է իր մէջ ճշմարտութեան մի մասը։ Քրդերի բռնութիւնը վաղուց հսկայ է ստացել և Թիւրքիան չառ անգամ ստիպված է եղել պաշտպանել իր քրիստոնէացի հպատակներին Բ. Գառնիսի հիմնեց «համիդի» քրդական մի առանձին հեծելազոր և անգլիկ ուժիկ էր տալիս նրան երկրի մէջ կարգ պահպանելու համար, բայց այդ «կարգապահ» զորքը օգուտ քաղեց հանգամանքից ջնջելու հայերին «օրէնքի հիման վրա», և նրա գործունէութիւնը արհուրած փաստերով զորոյվեց անցեալ տարիները հայերի կոտորածի ժամանակ։ Այժմ այդ հեծելազորքը մեծ մասը կուղարկվի Թեոսալիս, եթէ միայն սուլթանը չը բարեհաճի պահել իր մօտ իր անձի պաշտպանութեան համար։

Մնացած քրդերը բնակւում և աղաները անպատճառ հուճք էր լուրն հայերից։ Բայց հայ լիւսնականները ամենին նման չեն թիւրքաց քա-

ղաքներում ապրող ազաւ և ստորաբարչ մարդկանց, որպէս և ճանաչում են նրանց Եւրոպայում։ Ընդարձակ նահանգները կովկասում և Փոքր Ասիական թիւրքերում վաղուց անապատ կը դառնային, եթէ հայերը չը մշակէին հողը և անանապատութեամբ չը պարապէին։ Եւ այդ հայերը ոչնչով նման չեն իրանց այն ցեղակիցներին, որոնք ապրում են եւրոպական թիւրքիայի քաղաքներում և ցրված են ամբողջ Եւրոպայում։ Վերջին երկու տարիների ժամանակ հայերի յուսաւատ կոլուր, որ տեղի ունեցաւ հէնց վանի նահանգում, ապացուցեց, որ այդ արհամարհված ազգի երակների մէջ վաղում է հերոսական արիւն և ներկայումս այդ բանը աւելի է աչքի ընկնում, քան առաջ։ Պարսկաստանի հոգաւորութիւնը հայերի մասին բացատրվում է սահմանների հարեանութեամբ և նոյն պէս նրանով, որ Դահլը չառ աղատամիտ կերպով է վերաբերվում զէպի իր քրիստոնէացի հպատակները։ Հայերի համար պարսկական սահման անցնելը զէպի հարաւ և հարաւ-արեւել, իսկ զէպի հիւսիս—առաւել սահման անցնելը կեանքի և գոյքի վերկութիւն է։ Եթէ պարսկական զորքը թշնամական զործողութիւններ է սկսել, դա բացառապէս քրդերի ազատութիւնը և առաւելութիւնը չափաւորելու նպատակով է եղել, քրդերի, որոնք անաւթաբար կողոպտում և կոտորում են պարսկական սահմանի վրա եղած գիւղերը։

«Новости» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է. «Սիւրիկեանի զենաւորը այսօր լուրջ առաջադրութիւններ արաւ Բ. Գրան Հէքեաբարի անցքերի մասին վանի վիլայէթում, ուր բնակութիւն հաստատեցին հայ նեւապոսականները (?), որոնք յարաբերութիւն ունէին բողոքական այն միաբնակների հետ, որոնք կենտրոնաւորված գտնվում է Պարսկաստանում։ Յայտնի է, որ Հէքեաբարում չառ արիւն թափվեց, որի մասին հեռագրով տեղեկութիւն ստացվեց երբեք օր առաջ։ Թիւրքերը պատմում են, թէ մի քանի հազար զինուորված հայեր, անցնելով պարսից սահմանը, իբր թէ յարձակվեցին քրդերի վրա, որոնց մի քանի ցեղապետները սպանվեցին։ Անգլիական զենաւորատան մէջ կարծում են, որ այդ պատմութեան տակ ծածկվում են հայերի մի նոր կոտորած։ Դեռ մի քանի օր առաջ սըր Ֆելիպ Կէրրի Բ. Գրան ուղարկութեամբ հրաւիրեց զործերի վրա գրութեան վրա վանի վիլայէթում։ Այսօր նրա առաջադրութիւնները աւելի վճռական կը լինեն»։

Թիւրք պարսկական սահմանագիծի վրա տեղի ունեցած ընդհարման մասին Վիէնայի Neue Freie Presse թրքաւոր լրագիրը հետեւեալն է հաղորդում։ «Թիւրքաց կառավարութեան կատարած քննութիւնը (?) ցույց է տուել, որ անկարգութիւնների պատճառը պարսկահայերն են, որոնք յարձակվել են մէղրիկ քրդական ցեղի վրա և զանազան անգլիկութիւններ են կատարել։ Թէև հայ աւազակախմբերը նորից վրձնեցին սահմանից դուրս, բայց որովհետեւ նրանց մնալը պարսկական հողի վրա կարող է աղատել նրանց պատասխանատուութիւնից իրանց կատարած չարագործութեան համար, ուստի Կ. Պոլսում երկիւղ կրեցին, որ չը լինի թէ նրանց անպատիժ մնալը առիթ տայ հայերին կրկնել իրանց յարձակումները։ Այդ պատճառով թիւրքաց կառավարութիւնը զինաց պարսից կառավարութեան խնդրելով միջոցներ ձեռք առնել խախտելու հայերի յարձակումը Պարսկաստանի սահմանալից թիւրքաց գիւղերի վրա»։

Իսկ պարսկական տեղեկութիւններին նայելով, այժմ յայտնվում է, որ թիւրքաց Հայաստանում վանի նահանգի ժողովուրդը ապստամբվել է քրդերի դէմ և հայերը փախելով ապստամբ են գտնում պարսից հողի վրա»։

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՎՈՐՆԵՐ

Սալ մաստ, յուլիսի 27-ին

Պարսից կառավարութիւնը, հատկանալով քրդեր ապրի անպէտք և միանգամայն վնասակար լինելը՝ միջոցներ է ձեռք առնում աղատելու երկրը զբանց գաղանային ապստամբութիւնից։ Այժմ նա ուղարկել է Սալմաստ չորս ֆովուլ

զօրք (մօտաւորապէս 4000 հօգի), որոնք պիտի գործ ունենան չիկակ ցելիէ հետ: Արանից մի քանի օր առաջ զօրքը ընդհանրօրէն ունեցաւ այդ ցելիէ հետ: Տարաբաղաւոր, առաջին ընդհանրօրէն միջ յետոյ, զօրքը մի քանի զօներ տալով յետ նախնային: Լուր հասաւ, որ պարսիկներէ կողմից նոր յարձակում պիտի լինի:

Լուր եկաւ, որ մի քանի խումբ լաւ զինված հայեր, ուրախ օր, յուլիսի 25-ին, չորսպատուում են համրվողական Շարաֆ աղային և նրա մարդկանց մօտ 230 վրանները, որոնք դանվում էին պարսկա-թիւրքական սահմանակից Արաւու լեռան հարաւային լեռնահովիտներէ վրա, խանութի օրէնքի մօտ: Երկու կողմից սկսվում է հրացանաձգութիւն, և տեսն է երկու ժամ: Շարաֆ աղայի ամբողջ ցեղը բնաջինջ է լինում և ինքը Շարաֆ աղան սպանվում է: Այդ լուրը կայծակի արագութեամբ հասնում է չորսպալ քերդի համրվողականներին, որոնք ահաղին բազմութեամբ, միացած թիւրքաց կանոնաւոր զօրքի հետ, չորս կողմից յարձակվում են թշնամիներէ վրա: Կռիւղ տեսն է առաւօտից մինչև կէս գիշեր: Հայ խմբերը հնչին զօն են տալիս: Մանրամասնութիւնները պակասում են:

Ո.

ՆԱՄԱԿ ԲՈՂԱՐԻՍՏԻՑ

Ռուս աւուկ, յուլիսի 31-ին

Յուլիսի 26-ին մեր քաղաքի մէջ ահաւի աղէտ մը պատահեցաւ: Եղբարք խմանօշները գնած էին Պոլկար կառավարութիւնէ բաւական թով հին փամփուշաներ, որոնց վառօդները հանելու համար հիմնած էին գործարան մը: Ահա այս գործարանն էր, որը բռնկեցաւ: Գործարաններու մեծամասնութիւնը միասնաբար է: Այլադէպերու թիւը 150-ի կը հասնի: Վերաւորեալներ ևս կան թով 15—20 հօգի, որոնք կը զարմանալին կառավարութեան կողմանէ հիւանդանոցի մէջ ձերի Գեպըը պատահած է Ֆերդինանդ իշխանի քաղաքս հանելէն մի քիչ առաջ: Խմանալով պատահած դժբաղդութիւնը, իշխանը կը փութայ հանել աղէտին վայրը ու կը միտնարէ ժողովուրդը: Յաջորդ առաւօտ իշխանի ու միւր իշխանների ներկայութեամբ պատարագ մատուցվեցաւ սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, զօհերուն համար վերջին ժամուս ամենատաղ պղծութիւն իմացանք, որ բոլոր բանող գործարանները 318 հօգի են, որոնցից միայն 90-ը կըրցած են փախչել անմիջապէս ու զերծ մնալ վտանգէ: Վերաւորեալներ ևս մնած են: Խմանալ եղբարք մին ձերակալված ու բանտարկված է: Գրեթէ ամբողջ քաղաքային, որոնք կը պատրաստուէին մեծ հանդիսի տօնի իշխանի գահակալութեան տանկերով տարեդարձը, յուզեալ վիճակ մունին: Այդտեղ շարժառիթ կը ծանրանայ կառավարութեան պաշտօնեաներու վրա, որոնք իբր թէ մինչև այժմ ոչ մի բան չէին զրած գործարանին մէջ: Հանգանակութիւն մը բացուած է ի նպատակ սպաննուողներու ընտանեաց ու կարողացած են մինչև այժմ մի քանի օրվան մէջ հանգանակել 40,000 ֆըրանկէն աւելի: Միայն իշխանը տուած է 10,000 ֆրանկ:

Մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնուին Ֆերդինանդ իշխանի գահակալութեան տանկերով տարեդարձը տօնելու համար: Այսօր գրեթէ բոլոր փողոցները զանազան ծաղկեղէնով ու զրօշակներով զարդարեալ են: Մանրամասնօրէն կը հազարները յաջորդ նամակաւ:

Յ. Գեպըը

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կրեական հարցը վերջերս զաղարեց ընդնութեան առարկայ լինելուց: Անգլիական մի քանի լրագրիներ, նոյնպէս և Աթէնքի մամուլի մի մասը պնդում էին մինչև անգամ, որ կրեական հարցը կատարելապէս թաղված է: Այդ առիթով «Nord» լրագիրը հաւաստի աղբիւրներից հաղորդում է, որ այդ հարցը ամենին թաղված չէ: Մեծ պետութիւնները վերջական կերպով որոշեցին կրեալի աղաքան, և կարինքները սպասում են միայն յոյն-թիւրքական խաղաղութեան բանակցութիւնների վերջա-

նալուն, որպէս զի ստիպեն Բ. Գրան ընդունել պետութիւնների վէճը: Կրեալի վերաբերմամբ: Արդէն այժմ վճռված է՝ կատարեալ ինքնավարութիւն տալ կղզուն: Ինքնավար կառավարութեան գլուխնշանակելով կամ ընդհանուր նահանգապետ կամ մի պրինց: Կրեալի կոնսենսայ իր սեփական միջոցաւ:

«Local Anzeiger» լրագիրը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում. «Թիւրքաց ժողովրդական լուսաւորութեան միութնությունը պաշտօնեայ Ամիր-բէյի բանտարկութիւնը հետեւեալ կերպով տեղի ունեցաւ: Գաղտնի ոստիկանութիւնը գիշերից բաւական անցած՝ եկաւ Ամիր-բէյի տունը, բայց վերջինս թող չը տուէր մըտնել, ասելով. «ամեն մի գող կարող է անտաճառով նա պահանջել, որ օրէքի համաձայն, թաղի խմբը և երկու յայտնի բնակիչներ ներկայանան իբր վրաններ: Ոստիկանութիւնը ստիպվեց հնազանդել, բայց այդ չարտնական 4 ժամ և երբ ոստիկանութիւնը մտաւ Ամիրի տունը, այլ ևս չը գտան այն վտանգաւոր նամակները, որ յոյս ունէին զանկուս: Սակայն Ամիր բանտարկվեց, որովհետև լրտեսները պնդում էին, որ նա ոչնչացրել է իր բոլոր թղթերը, երբ ոստիկանութիւնը վրաններ ետեղի էր գնացել: Բացի Ամիր բէյից բանտարկվեցին միութնությունների երկու ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաները՝ Հեմբեր Էֆենդի և Շաքիր Էֆենդի»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բանից դուրս է գալիս, որ Էջմիածնի մայրաթիւղը մեծ-մեծ բէֆօրմներ է անում և այդ մասին հայկական սերունդը ոչինչ տեղեկութիւն չունի: Ուստի մեր օրգրական պարտք ենք համարում, համայն հայ աշխարհի հաղորդել այդ մեծ բէֆօրմներից դուրէ մէկը. — մայր առաւրտ, խեղճ բէֆօրմատորների ծրարով վերացված է մամբի գործածութիւնը, և զրա փոխարէն պիտի վաւերի լամպաներ՝ նախով... Թիֆլիսի ուսուցիչ նորաչէն մայր-առաւորում մամբի գործածութեան տեղ մայրված է եկեղեցական լուսաւորութիւն, բայց մենք չօ չենք կարող պահանջել, որ Էջմիածնի էլ, եթէ մամբը չէ հաւանում, փոխարինի նրանց եկեղեցական լուսով և ոչ թէ հոտած նախով, քանի որ մեզ յայտնի է, որ Էջմիածնի խեղճ գլուխները, իբր հայրենի երկրի հարազատ զաւակներ, հայրենի նախով գերադասում են օտար աւուս եկեղեցականութիւնը:

Մամբի տեղ նախ, — ահա բէֆօրմը...

ՄՇԱԿԻ ՀՆՌԱՎԻՐՆԵՐ

ՌԻՍՏԱՅ ԴՈՐՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

10-ի 10-ն 9 օգոստոսի Սիւլայից հաղորդում են. «Գնեկար Բէյը հասաւ Գալաթային՝ զինազրութեան չը հանդիպելով: Նախկին տեղեկութիւնները Աթիւրից ցելի պատմութեան մասին՝ չափազանցում են:

10-ի 10-ն 9 օգոստոսի «Times» լրագրին Չափաբաղին հետադրում են. «Այն օֆիցէրը, որ հնդկական կառավարութեան ներկայացուցիչն է, նամակ ստացաւ Միանգուլից, որը կրօնապէս հրամանատար է վերին Սիւլայից հովիտ վրա: Միանգուլի առաջարկում է նամակով իր խնամահայրութիւնը:

«Daily News» լրագրին Թաւրիզից հետադրում են. «Թիւրք-պարսկական սահմանի վրա քիւրդերը ներս խուճեցին Սալմաստի չրքանը, պարսկական հողի վրա, կատարելապէս կողպեցին և աւերեցին հայոց երկու գիւղեր և կառուցեցին 200 քրիստոնեաներ և մահմեդականներ: Պարսից կառավարութիւնը չարժանայում է զօրքեր ուղարկելը:

ՍԱՆՍԵՐԱՍՏԻԱՆՈՒ 9 օգոստոսի: Օգոստոսի 8-ին Անգիօլիօնի կախաղան բարձրացրին առաւօտեան 11 ժամին:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 8-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . . 93 ր. 75 կ. Երբիլի վրա 100 մարկ — . . 45 ր. 82 1/2 Պարիզի վրա 100 ֆրանկ — . . 41 1/2 ր. 75 Ոսկի — . . արծէ. . . 149 ր. 75 Մարսայի կուպօններ — . . 41 1/2 ր. 75 Բօրսայի զինված — . . 41 1/2 ր. 75 4 1/2 պետական բնութա. . . 99 ր. 75 Երբիլի 50/0 առաջին փոխառութիւն, 286 1/2 ր. 75 Երբիլի — . . 246 1/2 ր. 75 50/0 գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի 205 1/2 ր. 75 50/0 պետական երկաթուղ. բնութա — . . 98 3/4 ր. 75 40/0 ներքին փոխառութեան — . . 98 3/4 ր. 75 41 1/2 0/0 գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի 100 3/8 ր. 75 Այն. կալ. Պետ. բանկի խաղաղութիւն. — . . 99 3/4 ր. 75

4 1/2 0/0 վկայակ. գիւղ. հող. բանկի	101 3/8 ր. 75
Փոխ. կրեդիտ. ընկեր. մեծաւ.	— ր. 75
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	— ր. 75
Ընկերութեան օրիգայիսներ.	101 5/8 ր. 75
Մոսկույի քաղաք. օրիգայիսներ.	101 1/2 ր. 75
Օրէնսայի — — —	100 ր. 75
Թիֆլիսի — — —	99 1/4 ր. 75
Թիֆլիսի կալ. բանկի 60/0 — — —	102 ր. 75
50/0 — — —	99 5/8 ր. 75
Գոթայի — — —	102 ր. 75
50/0 — — —	99 3/4 ր. 75

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՊԱՏԻԱՌՈՐ ԸՆՏԱՆԻՐ

Ընդունում է երկու փոքրածառի աշակերտներ կամ աշակերտահինքի կերակրելու և խնամելու, ձեռնառն պայմանով: Մարտի և ապրիլ-մայիս քաղաքային կառավարան հոգեւորականութիւն: Հարցնել Ալիխանովի մագալինում, Լօրիս-Մէլիօվսկայա և Բարոնսկայա փողոցների անկիւն: (№ 93) 1—5

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ծանապարհով հմուտ հաշուապահներ: Առարկաները ստանում են առեւտրական կուրսերի ստանդարտը սրանք են՝ 1) Առեւտրական հետեւութիւն, 2) Առեւտրական թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնաթիւ և բանկային), 4) Թուարանութիւն համընթաց վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղարդութիւն, վառ ձեռքի ուղղութիւն:

Առումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Սոլոյալում, Ալեքսանդր ֆրիդմանի տանը, № 9, Սերգիևսկայա և Նազարեայա փողոցների անկիւնում: Ծրարիչը և կանոնները կարելի է ստանալ ձերի ապէս կըր. Ծովանօշների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Օտարաբաղաւորները զինում են՝ Тифлисы, С. П. Мануэльянцу. (Ե. շ.) (№ 76) 10—25

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C^{ie}

ՅԻՆՆԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷՅԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթիից:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկավ Տրապիզոն, Սամսոն և Պոլիս Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 20-ին օգոստոսի (1 սեպտեմբ.) ՍԻՐԱԿԱՍ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐՐԻԿ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարները արվում են սովորականից Պակաս գնի օրով: Այդպիսիների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնները ստանալու համար թող բարեհաճեն զինել ընկերութեան գործակալներին:

ԲԱԹՈՒՄԻՍՏ—պ. Վիկտոր Դ'Արմօն, Նաբեքմայա: ԹԻՖԼԻՍԻՍՏ—պ. Օ. Գ. Բարեկենդա. նեանին, Սիօնի փող. Նախկին Արմօնու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Գիլդաբանին, Կոլիբեա. նիակայա հրադարակ: ՆՈՎՈՐՈՍՍԻՑԿԱ—պ. Միլիտօր Հերշինդերին: (№ 76) 13—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆԱՄԵԱՆ

Հեղինակ Չեռնոբիլի առեւտրական և գործարանական հաշուապահութեան ՌԻՍՏԱՅՆՈՒՄ ԵՒ ՊԵՏԵՐՈՒՄ ԵՒ ՊԵՏԵՐՈՒՄ է: Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և քաղաւորակով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել: ՊԱՐԱՊՄՈՒՆԻՒՄ ԱՌԱՐԿԱՆԵՐՆԵՐ ՆԵՐ Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ձեւերի, հանդերձ նախկին արդիւնաբերական և կերտնի գործարանական հաշուապահութեան: Բ) Առեւտրական թուարանութիւն. Գ) Առեւտրական նամակագրութիւն. Դ) Գեղարդութիւն և ամենապարզ ձեւերի ուղղութիւն: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20-րդ ամսից յետոյ, իսկ կրկնակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ: Յանկացողները թող զինեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյան, ՍՈՒՍՈՒՄ, Սաղօվայա փողոց, առն Մարքարովի, № 27: Վերջինից հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՍՏ, ինչպէս երկու գրաւմանն ունի և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւմանն ունի ԳԻՆԵՐ ԵՒ Յ. Բ. 50 կողակ: Օտարաբաղաւորները զիրքը գնելու համար կարող են զինել հեղինակին, առանց պատայի ծախս վճարելու: (Ե. հ.) (№ 76) 11—15